

Մանոթ. Ժամանակագիր Ստեփանոս Ռոշքան (1670-1739) թվագրել է ՉՂԹ (1350)-ով¹⁴⁷, որը շտկում է Յա. Դաշկեիչը¹⁴⁸: Գործածվել է Կամենեցում և այլուր՝ որոշ ընդմիջումներով (թուրքերի տիրապետության ժամանակ՝ 1672-1701 թթ.) մինչև 1787թ.:

Հրատ. Բ. Дашкевич, АОП, 243, АЧП, 169, 175.

535. Կլոր կնիք՝ Հովհաննես- Մկրաչի պատկերով. վրան՝ գառ, գլուխը աջ շրջած, ձախ կողմում՝ չեչ մագնաաներ Ջամոյսկիների օվալաձև զինանշանը:

Շրջանակի մեջ՝

ԱՅՍ Է Մ [Ո] ՀՐ ՋԱՄՈՍՅԱԻՆ ՀԱՅՈՑ ԴԱՏԱԼՍԱՆԻԻ:

Հրատ. Բ. Дашкевич, АОП, 243, АЧП, 169.

536. Կլոր կնիք, զրոշակակիր գառան պատկերով (տրամ. 23մմ), եզրերին շրջանաձև փորագրված է.

(Siail+ivris+ARMENORUM+LEOP[OLIE NSIUM].)

Թարգմ.

«Լվովի Հայոց իրավունքի կնիք»:

Մանոթ. Կնիքի արտատիպը պահպանվել է Կրակովի Յագելոնյան գրադարանում: Առաջին անգամ նկարագրված է Օ. Բալցերի կողմից¹⁴⁹: Գործածվել է բացառիկ հանդիսավոր իրագար-ձուլթյունների ժամանակ իրեն «Հատուկ կնիք»:

Հրատ. Բ. Дашкевич, АЧП, 171-172.

537. Մասնավոր կնիք՝ Ստանիսլավից, զրոշակակիր գառան պատկերով (տրամ. 32x37մմ): Վահանակի շուրջ.

ՄՈՀՈՒՐԻՍ ՍՏԱՆԻՍԼԱՎՈՎԱ ՔԱՂԱՔԻՆ ՀԱՅՈՑ ԴԼԱՍԼԱՍՏԱՆԻ Է:

Մանոթ. Լուսապատկերը ցուցաբերվում է Իվանո-Ֆրանկովսկի (նախկին՝ Ստանիսլավ) երկրագիտական թանգարանում: Արձանագրության հայերեն ընագրի վերծանությունը Լ. Խաչիկյանին է:

Հրատ. Բ. Дашкевич, АЧП, 172-173, 175.

ԵՂԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆԻՔՆԵՐ

538. Լվովի ս. Գրիգոր Լուսավորիչ կարայրության ձվաձև կնքագրոշմն ունի հետևյալ պատկերը. կանգնած է Լուսավորիչը երկար մորուքով, դավազանը ձախ ձեռքին, գլխին՝ հայրապետական խույր, լուսապսակի մեջ: Կնքագրոշմի տրամագիծը՝ 27x34մմ, վրա շուրջանակի փորագրված է.

ԿՆԻՔՍ ԵՂԱՅՐՈՒՍ ՍԼՐԻՔԼՈՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՁԻՆ ԼՈՎ ՔԼԱՂԼԱՔԻ:

147 Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրություն կամ տարեկանք եկեղեցականք, Ռրատ. Լ. Ոսկյան. Վիեննա, 1964. էջ 149-150:

148 Les historiens asmenienncs en Ukraine au XVIII-e siècle. «Revue des études arméniennes». N s. t. 9, Paris, 1972, էջ 389.

149 Corpus iuris Polonici, sect. I vol. 3 ed. O. Baizer. Cracoviae, 1906. էջ 402.


Մանթ. Լվովի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եղբայրութիւնը հիմնադրվել է 1640 թ.: Կնքադրոշմների արտատիպերը պահպանվել են 1731-1751 թթ. փաստաթղթերի վրա:

Հրատ. Я. Дашкевич, АОП, 247, АЧП, 175,

539. ՏՈՀՄԱՆՇԱՆՆԵՐ

Ուկրաինայի արևմտյան մարզերում եղած հայկական տապանաքարերի վրա կան զարդանախշերով շրջանակների մեջ վերցված խորհրդանշաններ, որոնց առաջինը ուշադրութիւն է դարձրել լեհ ակադեմիկոս պատմաբան Վլադիսլավ Լոդինսկին¹⁵⁰: Նա ղուղազեռներ է անցկացնում դերմանական դմբերկների (Gemerk) հետ, որոնք դրոշմվում էին արտադրանքների, բնակարանների, այլև տապանաքարերի վրա: Հրատարակել է 110 խորհրդանշակտն պատկեր, որոնցից շուրջ 40-ը վերարբերում են Հայ դերդաստաններին: Տեղում կատարած մեր ուսումնասիրութիւնները ցույց տվեցին, որ դրանք տոհմանշաններ են և վերարբերում են լեհահայ դադութի ականավոր հայ ընտանիքներին: Այդ նույն պատկերները տեսնում ենք նրանց կնքադրոշմների վրա: Հետաքրքիր նմուշներ են Խաչքո Ավետիքեցի, Կրեսքո Զահնովիչի, Բողդան Իվաչքոյենցի, Քրիստափոր Ավեդիկ Բեռնատովիչի, Ֆարուխովիչների, Ավդուստինովիչների, Յակեիչների և այլոց տոհմանշանները, որոնց մի մասն ունի տարրերակներ: Որոշ տապանադրեր մեղ են հասել խիստ եղծված վիճակում, ուստի դրանց տոհմանշանները տրվում են հարցականներով:

Ներկայացնում ենք Լվովի Հայոց եկեղեցու շուրջ եղած 46 տոհմանշան, որոնց զգալի մասն ընդօրինակել ենք տեղում:



150 Patrycyat i mieszczanstwo lwowskie wXVI i XVII wieku, przez Władysława Lozinskiego, wydanie wznowione z 107 ryginami w tekście, we Lwowie, 1902, str. 386-391. Հետագայում լեհախոյ գաղթօջախի Ռասարակակամ և մասնավոր կնքադրոշմների քննությանն ւսմիրադարձավ քաջագիտակ մասնագետ Յա. Խաչատրյանը: «Բանրեր Մատենադարանի» հանդեսում (1980, N13, էջ 139-191) նա հրատարակեց 69 կնքադրոշմների պատկերներ՝ իրենց գրչագրերով և 56 տոհմանշաններ (նույն տեղում, էջ 186-187):